ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյան

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյան

**2. Գործուղման վայրը և ժամկետները**

Ֆրանսիայի Հանրապետություն (ք. Փարիզ)

2026 թվականի հուլիսի 8-11-ը:

**3. Հրավիրող կողմը**

ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրեն Խալեդ Էլ Էնանի:

**4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**

Մասնակցություն 2026 թվականի հուլիսի 10-ին Փարիզում կայանալիք ԿԶՆ4 ղեկավար կոմիտեի առաջնորդների հանդիպմանը զուգահեռ կայանալիք «Կրթության վերափոխման գագաթնաժողով+4» խորագրով բարձրաստիճան երկխոսությանը:

**5. Քննարկված թեմաները**

Ֆրանսիայի Հանրապետություն կատարած աշխատանքային այցի շրջանակում հանդիպումներ են տեղի ունեցել Ֆրանսիայի մշակույթի նախարար Կատրին Պեգարի, Ֆրանսիայի Եվրոպայի և արտաքին գործերի նախարարության՝ Ֆրանկոֆոնիայի, միջազգային գործընկերության և արտերկրում բնակվող Ֆրանսիայի քաղաքացիների հարցերով լիազոր նախարար Էլեոնոր Կարուայի, Hôtel Drouot աճուրդային կենտրոնի նախագահ Ալեքսանդր Ժիքելյի, Ֆրանսիայի ազգային կրթության նախարար Էդուար Ժեֆրեի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի մշակույթի հարցերով գլխավոր տնօրենի տեղակալ Նայեֆ Հ. Ալ-Ֆայեզի, ԱՄԷ կրթության նախարարության գլխավոր քարտուղար Մոհամմադ Ալ Քասիմիի, Եգիպտոսի Արաբական Հանրապետության բարձրագույն կրթության և գիտական հետազոտությունների նախարար Աբդել Ազիզ Կոնսովայի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրեն Խալեդ Էլ-Էնանիի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի կրթության հարցերով գլխավոր տնօրենի տեղակալ Քուն Չենի հետ:

Այցի շրջանակում ՀՀ ԿԳՄՍ նախարարի գլխավորած պատվիրակությունը մի շարք աշխատանքային հանդիպումներ է ունեցել նաև գործընկեր երկրների

պատվիրակությունների ներկայացուցիչների հետ: Մասնավորապես՝ նախարար Ժաննա Անդրեասյանը հանդիպել է Վրաստանի կրթության, գիտության և երիտասարդության նախարար Գիվի Միկեևաձեի հետ և Մոնտենեգրոյի կրթության, գիտության և նորարարության նախարար Անջելա Յակշիչ-Ստոյանովիչի հետ: ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը քննարկումներ է ունեցել Ուզբեկստանի նախադպրոցական և դպրոցական կրթության նախարարի առաջին տեղակալ Շերզոխ Կարիմովի, ինչպես նաև Սաուդյան Արաբիայի կրթության նախարարության միջազգային համագործակցության հարցերով նախարարի տեղակալ Լատիֆա Ալ-Ֆարյանի և Օմանի կրթության նախարարության կրթական աջակցության ծրագրերի գծով փոխնախարար Ինտիսար Աբդուլլահ Սուլեյման Ալ-Ամբուսայիդի հետ:

Հանդիպումների ընթացքում քննարկվել են կրթության ոլորտում երկկողմ համագործակցության զարգացման, փորձի փոխանակման, կրթական բարեփոխումների իրականացման, համատեղ ծրագրերի ընդլայնման հնարավորությունները, Հայաստանում ֆրանսերենի ուսուցմանն ու տարածմանն ուղղած ծրագրերը, անդրադարձ է կատարվել նախադպրոցական կրթության ոլորտում փորձի փոխանակմանը, դաստիարակների մասնագիտական վերապատրաստման համատեղ ծրագրերի իրականացմանը:

Քննարկվել է Հայաստանի ակտիվ ներգրավվածությանը ՅՈՒՆԵՍԿՕ-ի կառավարման և մասնագիտական մարմինների աշխատանքներին:

Անդրադարձ է եղել նաև ոչ ֆորմալ կրթական ծրագրերին՝ կարևորելով Փարիզում գործող «Թումո» կենտրոնի մասնաճյուղի գործունեությունը:

Քննարկվել են նաև 2027 թվականին Հայաստանում կայանալիք Ֆրանկոֆոնիայի 10-րդ միջազգային մարզամշակութային խաղերի կազմակերպմանը վերաբերող հարցեր:

Քննարկվել են թանգարանների միջև երկարաժամկետ համագործակցության, համատեղ ցուցահանդեսների, թանգարանային մասնագետների փորձի փոխանակման, հավաքածուների պահպանության, վերականգնման և թվայնացման, ինչպես նաև մշակութային ժառանգության պահպանության ու կառավարման ոլորտներում համատեղ ծրագրերի իրականացման հնարավորությունները: Անդրադարձ է եղել նաև երիտասարդ մասնագետների վերապատրաստմանը, ժամանակակից արվեստի, ստեղծարար արդյունաբերությունների, համատեղ կինոարտադրության, գրականության և թարգմանական ծրագրերի զարգացմանը:

Քննարկվել են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք այլ հարցեր:

**6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Ֆրանսիայի Հանրապետություն կատարած աշխատանքային այցի շրջանակում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը հանդիպել է Ֆրանսիայի մշակույթի նախարար Կատրին Պեգարի հետ:

Հանդիպմանը մասնակցել են նաև ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը և Ֆրանսիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արման Խաչատրյանը:

Ողջունելով գործընկերոջը՝ Ժաննա Անդրեասյանը շնորհակալություն է հայտնել ընդունելության և շարունակական համագործակցության համար՝ ընդգծելով, որ մշակույթը Հայաստան-Ֆրանսիա հարաբերությունների առանցքային ուղղություններից է: Նախարարը շնորհակալություն է հայտնել Ֆրանսիային շարունակական գործընկերության համար՝ նշելով, որ միջմշակութային համագործակցությունը վերջին տարիներին զգալիորեն ակտիվացել է և ունի ընդլայնման մեծ ներուժ:

Նախարարն առանձնացրել է Հայաստանի պատմության թանգարանի և Փարիզի Լուվրի թանգարանի համատեղ կազմակերպած ցուցադրությունը՝ այն գնահատելով որպես երկկողմ մշակութային համագործակցության հաջողված օրինակ:

Անդրադարձ է կատարվել նաև Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի Հայաստան կատարած պետական այցին, որի շրջանակում ստորագրվել են համագործակցության մի շարք փաստաթղթեր, այդ թվում՝ մշակույթի ոլորտում: Այս համատեքստում քննարկվել են արդեն իսկ ձեռք բերված համագործակցության արդյունքները և դրանց հետագա զարգացման հեռանկարները: Մասնավորապես, կարևորվել է Հայաստանի ազգային պատկերասրահի և Փարիզի «Ժորժ Պոմպիդու» արվեստի և մշակույթի ազգային կենտրոնի միջև ձևավորված համագործակցությունը: Ֆրանսիական կողմը նշել է, որ հետաքրքրված է Օրսեի թանգարանի և հայկական որևէ թանգարանի հետ համագործակցության հաստատման հարցում և պատրաստակամ է աջակցելու համատեղ նախաձեռնություններին:

Ժաննա Անդրեասյանի խոսքով՝ նմանօրինակ նախաձեռնությունները ոչ միայն հնարավորություն են տալիս ներկայացնելու համաշխարհային մշակութային ժառանգությունը, այլև նպաստում են ժողովուրդների միջև մշակութային երկխոսության խորացմանը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են թանգարանների միջև երկարաժամկետ համագործակցության, համատեղ ցուցահանդեսների, թանգարանային մասնագետների փորձի փոխանակման, հավաքածուների պահպանության, վերականգնման և թվայնացման, ինչպես նաև մշակութային ժառանգության պահպանության ու կառավարման ոլորտներում համատեղ ծրագրերի իրականացման հնարավորությունները: Անդրադարձ է եղել նաև երիտասարդ մասնագետների վերապատրաստմանը, ժամանակակից արվեստի, ստեղծարար արդյունաբերությունների, համատեղ կինոարտադրության, գրականության և թարգմանական ծրագրերի զարգացմանը:

Անդրադառնալով Ֆրանկոֆոնիայի շրջանակում համագործակցությանը՝ Ժաննա Անդրեասյանը նշել է, որ Հայաստանը մեծ կարևորություն է տալիս այդ հարթակին: Նա տեղեկացրել է, որ 2027 թվականի հուլիսին Երևանը կհյուրընկալի Ֆրանկոֆոնիայի

մշակույթի նախարարների համաժողովը, որին կհաջորդեն Ֆրանկոֆոնիայի 10-րդ մարզամշակութային միջազգային խաղերը: Նրա ընդգծմամբ՝ ֆրանսիացի գործընկերների փորձն ու աջակցությունը կարևոր նշանակություն կունենան այդ կարևոր միջոցառումների կազմակերպման գործում, որոնք Հայաստանի համար բացառիկ հնարավորություն են միջազգային հանրությանը ներկայացնելու մեր երկրի մշակութային ժառանգությունը, ժամանակակից արվեստն ու ստեղծարար ներուժը:

Ֆրանսիայի մշակույթի նախարար Կատրին Պեգարը բարձր է գնահատել Հայաստանի հետ մշակութային համագործակցության ընթացքն ու համատեղ նախաձեռնությունների արդյունքները՝ պատրաստակամություն հայտնելով շարունակել համագործակցությունը թանգարանային գործի, մշակութային ժառանգության պահպանության, ժամանակակից արվեստի և մշակութային փոխանակումների ուղղություններով: Նա կարևորել է Հայաստանի ներդրումը ֆրանկոֆոն շարժման մեջ և վստահություն հայտնել, որ առաջիկա միջոցառումները կանցկացվեն բարձր մակարդակով:

Աշխատանքային այցի շրջանակում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը հանդիպել է նաև Ֆրանսիայի Եվրոպայի և արտաքին գործերի նախարարության՝ Ֆրանկոֆոնիայի, միջազգային գործընկերության և արտերկրում բնակվող Ֆրանսիայի քաղաքացիների հարցերով լիազոր նախարար Էլեոնոր Կարուայի հետ:

Հանդիպմանը մասնակցել են նաև ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը և Ֆրանսիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արման Խաչատրյանը:

ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը շնորհակալություն է հայտնել ջերմ ընդունելության համար՝ բարձր գնահատելով հանդիպումը Հայաստան–Ֆրանսիա բազմաշերտ համագործակցության ամրապնդման, ինչպես նաև կրթության, մշակույթի և ֆրանկոֆոնիայի ոլորտներում հարաբերությունների զարգացման տեսանկյունից:

Կողմերն առանձնակի կարևորել են Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի՝ Հայաստան կատարած պետական այցի շրջանակում երկկողմ հարաբերությունների ամրապնդմանն ուղղված հուշագրերը և դրանցից բխող նոր գաղափարների իրականացումը:

Հանդիպմանն անդրադարձ է եղել 2027 թվականին Երևանում Ֆրանկոֆոնիայի 10-րդ մարզամշակութային խաղերի անցկացմանը՝ որպես Հայաստանի միջազգային հեղինակության ամրապնդման, երիտասարդության ներգրավման և ֆրանկոֆոն համագործակցության խորացման կարևոր հնարավորություն: Ֆրանկոֆոնիայի, միջազգային գործընկերության և արտերկրում բնակվող Ֆրանսիայի քաղաքացիների հարցերով լիազոր նախարար Էլեոնոր Կարուան փոխանցել է ֆրանսիական կողմի պատրաստակամությունը՝ աջակցելու Հայաստանին խաղերի կազմակերպման հարցում:

ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը գործընկերոջ հետ քննարկել է նաև Հայաստանում ֆրանսերենի ուսուցմանն ու տարածմանն ուղղած ծրագրերը՝ նշելով, որ Հայաստանի 250 դպրոցների շուրջ 60 հազար աշակերտներ ուսումնասիրում են ֆրանսերեն: Այս համատեքստում հատկապես ընդգծվել է Երևանի Անատոլ Ֆրանսի անվան ֆրանսիական կրթահամալիրի դերը՝ որպես ֆրանսերենով կրթության և ֆրանկոֆոն մշակույթի տարածման կարևոր կենտրոն Հայաստանում: Անդրադարձ է եղել նաև բարձրագույն կրթության և ֆրանկոֆոն մասնագետների պատրաստման հարցին՝ շեշտելով Հայաստանում Ֆրանսիական համալսարանի (UFAR) կարևոր դերակատարումը: Նշվել է նաև կրկնակի դիպլոմների (double degrees) և համատեղ կրթական ծրագրերի ընդլայնման կարևորությունը Հայաստանի և Ֆրանսիայի բուհերի միջև:

Ժաննա Անդրեասյանը բարձրագույն կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների շրջանակում անդրադարձել է «Ակադեմիական քաղաք» ծրագրին՝ ներկայացնելով աշխատանքների ընթացքը: Այս համատեքստում քննարկվել է Ֆրանսիայի բուհերի և հետազոտական կենտրոնների հնարավոր ներգրավումը նախագծում և համատեղ գիտահետազոտական կենտրոնների, լաբորատորիաների և ինովացիոն հարթակների ստեղծման հեռանկարը:

Կրթական բարեփոխումների համատեքստում ՀՀ ԿԳՄՍ նախարարը ներկայացրել է Հայաստանի ուսումնական հաստատություններում արհեստական բանականության ներդրմանն ուղղված ծրագրերն ու արձանագրված հաջողությունները:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են Հայաստան-Ֆրանսիա հարաբերություններին առնչվող մի շարք այլ հարցեր:

Փարիզ կատարած այցի շրջանակում ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանի գլխավորած պատվիրակությունն այցելել է Hôtel Drouot աճուրդային կենտրոն և հանդիպել կառույցի նախագահ Ալեքսանդր Ժիքելոյի հետ: Հանդիպմանը ներկա են եղել նաև ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը և Ֆրանսիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արման Խաչատրյանը:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի գլխավորած պատվիրակությունը շրջայց է կատարել կենտրոնում, ծանոթացել վերջինիս գործունեությանը, աճուրդների կազմակերպման և անցկացման ընթացակարգերին, կիրառվող տեխնոլոգիաներին: Նախարարին ներկայացվել է, թե ինչպես են պահպանվում հատկապես հին լոտերը, որոնք լրացուցիչ ուշադրության կարիք ունեն: Ալեքսանդր Ժիքելոն ներկայացրել է նաև աճուրդային գործընթացի առանձնահատկությունները, տարբեր երկրների հետ համագործակցության ուղղությունները և մյուս կարևոր մանրամասները:

Կողմերը պայմանավորվածություն են ձեռք բերել շարունակելու համագործակցությունը աճուրդային համակարգի, արվեստի շուկայի կառավարման, մշակութային փոխանակումների, ինչպես նաև մշակութային արժեքների օրինական

շրջանառության խթանման և ապօրինի շրջանառության կանխարգելման հետ կապված:

Անդրադարձ է կատարվել նաև մասնագիտական կարողությունների զարգացմանը՝ կարևորելով փորձի փոխանակման ծրագրերը, Hôtel Drouot-ի հետ մասնագիտական այցերի կազմակերպումը, ինչպես նաև հայկական թանգարանների մասնագետների, կուրատորների և արվեստի փորձագետների վերապատրաստման հնարավորությունները:

Hôtel Drouot կենտրոնն ունի 17 աճուրդային և ցուցահանդեսային սրահ, որտեղ գործում են ավելի քան 100 լիցենզավորված աճուրդավարներ: Ամեն տարի այստեղ անցկացվում է շուրջ 2,000 աճուրդ, որոնց ընթացքում վաճառվում է մոտ 600,000 առարկա: Կենտրոնն առաջարկում է նաև արվեստի գործերի գնահատման, փոխադրման և պահեստավորման ծառայություններ, ինչպես նաև մշակութային ոլորտի մասնագիտական վերապատրաստման ծրագրեր:

Աշխատանքային այցի շրջանակում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը հանդիպել է Ֆրանսիայի ազգային կրթության նախարար Էդուար Ժեֆրեի հետ:

Հանդիպմանը մասնակցել են նաև ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը և Ֆրանսիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արման Խաչատրյանը:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ Ժաննա Անդրեասյանը կարևորել է Հայաստանի և Ֆրանսիայի միջև կրթության ոլորտում ձևավորված արդյունավետ և շարունակական համագործակցությունը՝ վերահաստատելով համատեղ ծրագրերը շարունակելու և ընդլայնելու պատրաստակամությունը:

ՀՀ ԿԳՄՍ նախարարը ներկայացրել է Հայաստանի կրթական համակարգում իրականացվող հիմնական բարեփոխումները՝ առանձնահատուկ անդրադառնալով կրթական համակարգում արհեստական բանականության ինտեգրմանը: Մասնավորապես՝ նա առանձնացրել է ավագ դպրոցներում ԱԲ սերունդ, STEP.AI կրթական ծրագրերը, ինչպես նաև «AI Generation» բազմաստիճան կրթական նախաձեռնությունը, որն ուղղված է ԱԲ ոլորտում մասնագետների պատրաստմանը՝ դպրոցից մինչև հետբուհական կրթություն:

Ժաննա Անդրեասյանը ներկայացրել է նաև ՀՀ ԿԳՄՍ նախարարության և OpenAI միջազգային ընկերության համագործակցությունը, որի շրջանակում ChatGPT Edu գործիքը հասանելի կդառնա Հայաստանի կրթական համայնքին՝ առաջիկա սեպտեմբերից ապահովելով շուրջ 50 հազար բաժանորդագրություն ուսանողների, ուսուցիչների և հետազոտողների  համար: Այս համատեքստում քննարկվել են նաև երկու երկրների միջև փորձի փոխանակման և հնարավոր համատեղ ծրագրերի իրականացման հեռանկարները:

Անդրադարձ է եղել նաև ոչ ֆորմալ կրթական ծրագրերին՝ կարևորելով Փարիզում գործող «Թումո» կենտրոնի մասնաճյուղի գործունեությունը, որտեղ ևս մեծ ուշադրություն է դարձվում արհեստական բանականության ինտեգրմանը կրթական ծրագրերում:

Ֆրանսիայի ազգային կրթության նախարար Էդուար Ժեֆրեն, ողջունելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի գլխավորած պատվիրակությանը, բարձր է գնահատել Հայաստանի հետ կրթության ոլորտում ձևավորված արդյունավետ համագործակցությունը՝ ընդգծելով, որ այն հիմնված է փոխադարձ վստահության և ընդհանուր արժեքների վրա: Նա կարևորել է Հայաստանում ֆրանսերենի ուսուցման զարգացմանն ուղղված համատեղ ծրագրերը՝ նշելով, որ դրանք նպաստում են ոչ միայն լեզվի տարածմանը, այլև երկու երկրների միջև բազմակողմ կապերի ամրապնդմանը:

Էդուարդ Ժեֆրեն ևս ներկայացրել է արհեստական բանականության ուղղությամբ Ֆրանսիայի կրթական համակարգում իրականացվող նախաձեռնությունները՝ նշելով, որ ԱԲ գրագիտությունը դպրոցական ծրագրերում ներառված է որպես առանձին ուսումնական բաղադրիչ:

Հանդիպմանն անդրադարձ է կատարվել նաև նախադպրոցական կրթության ոլորտում փորձի փոխանակմանը, քննարկվել է դաստիարակների մասնագիտական վերապատրաստման համատեղ ծրագրերի իրականացման հնարավորությունը:

Նշելով, որ 2019 թվականից նախադպրոցական կրթությունը Ֆրանսիայում դարձել է պարտադիր և անվճար՝ Ֆրանսիայի ազգային կրթության նախարարը ներկայացրել է ոլորտի հիմնական առանձնահատկությունները:

Հայաստանի և Ֆրանսիայի նախարարները քննարկել են նաև երեխաների կողմից սոցիալական ցանցերի չափազանց ակտիվ օգտագործման խնդիրը՝ ընդգծելով, որ մշակվում են համապատասխան քայլեր և կարգավորումներ՝ դպրոցականների մուտքը սոցիալական ցանցեր սահմանափակելու և վերահսկելու ուղղությամբ՝ այդ կերպ ապահովելով նրանց համար անվտանգ թվային միջավայր:

Ժաննա Անդրեասյանն առաջարկել է ձևավորել երկու նախարարությունների միջև առավել համակարգված և երկարաժամկետ համագործակցության օրակարգ՝ ակտիվացնելով փորձի փոխանակման և ծանոթության երկկողմ այցերը:

Կողմերը վերահաստատել են կրթության ոլորտում համագործակցության հետագա խորացման պատրաստակամությունը:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը հանդիպել է նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի մշակույթի հարցերով գլխավոր տնօրենի տեղակալ Նայեֆ Հ. Ալ-Ֆայեզի հետ:

Հանդիպմանը մասնակցել են նաև ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը և ՅՈՒՆԵՍԿՕ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչ Արամ Հակոբյանը:

Շնորհավորելով Նայեֆ Ալ-Ֆայեզին ՅՈՒՆԵՍԿՕ-ի մշակույթի հարցերով գլխավոր տնօրենի տեղակալի պաշտոնը ստանձնելու կապակցությամբ՝ Ժաննա Անդրեասյանը

հաջողություններ է մաղթել նրան պատասխանատու առաքելության իրականացման գործում և վստահություն հայտնել, որ նրա ղեկավարությամբ ՅՈՒՆԵՍԿՕ-ի մշակութային օրակարգը կհարստանա նոր նախաձեռնություններով և միջազգային համագործակցության ընդլայնման նոր հնարավորություններով:

Նայեֆ Ալ-Ֆայեզը շնորհավորել է Հայաստանին ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կոմիտեի անդամ ընտրվելու կապակցությամբ՝ այն գնահատելով որպես կարևոր ձեռքբերում և միջազգային մակարդակում Հայաստանի մշակութային հեղինակության վկայություն:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել Հայաստանի ակտիվ ներգրավվածությանը ՅՈՒՆԵՍԿՕ-ի կառավարման և մասնագիտական մարմինների աշխատանքներին:

Քննարկվել են Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի միջև համագործակցության հեռանկարները. ՀՀ ԿԳՄՍ նախարարը ներկայացրել է Մատենադարանի գիտական, կրթական և մշակութային գործունեությունը՝ ընդգծելով, որ այն ոչ միայն ձեռագրերի պահպանության և ուսումնասիրման առաջատար կենտրոն է, այլև ունի տարածաշրջանային և միջազգային վերապատրաստումների հարթակ դառնալու ներուժ՝ ձեռագրերի պահպանության և վերականգնման ոլորտում:

Անդրադարձ է եղել ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ Հռչակավոր մարդկանց և կարևոր իրադարձությունների 2026–2027 թվականների օրացույցում ընդգրկված հայկական հոբելյաններին, մասնավորապես՝ հայականավոր լեզվաբան, ակադեմիկոս Հրաչյա Աճառյանի ծննդյան 150 և Երևանի Հանրապետության հրապարակի շինարարության մեկնարկի 100 ամյակներին, որոնց նվիրված միջոցառումներ են կազմակերպվելու նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում:

Ժաննա Անդրեասյանը  նաև նշել է, որ Հայաստանի համար մեծ նշանակություն ունի առաջիկա նստաշրջանի աշխատանքներին մասնակցությունն ու Համաշխարհային ժառանգության կոմիտեի շրջանակում արդյունավետ համագործակցությունը ՅՈՒՆԵՍԿՕ-ի ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության կոնվենցիայի շրջանակում:

Քննարկվել են նաև 2027 թվականին Հայաստանում կայանալիք Ֆրանկոֆոնիայի 10-րդ միջազգային մարզամշակութային խաղերի կազմակերպմանը վերաբերող հարցեր:

Հանդիպման ավարտին կողմերը վերահաստատել են մշակույթի ոլորտում համագործակցության ընդլայնման պատրաստակամությունը և համոզմունք հայտնել, որ հանդիպումը նոր համատեղ ծրագրերի ու նախաձեռնությունների մեկնարկի կարևոր հիմք կդառնա:

Ֆրանսիա կատարած այցի շրջանակում ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը հանդիպել է «Կրթության վերափոխման գագաթնաժողով+4»

բարձրաստիճան միջոցառման շրջանակում Փարիզում գտնվող ԱՄԷ կրթության նախարարության գլխավոր քարտուղար Մոհամմադ Ալ Քասիմիի հետ:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են Հայաստանի և Արաբական Միացյալ Էմիրությունների միջև կրթության ոլորտում համագործակցության ընդլայնման և փորձի փոխանակման հնարավորությունները՝ կարևորելով երկու երկրների միջև ձևավորված կառուցողական երկխոսությունը:

Ժաննա Անդրեասյանը ներկայացրել է Հայաստանի կրթական բարեփոխումների առաջնահերթությունները՝ անդրադառնալով կրթության զարգացման մինչև 2030 թ. պետական ծրագրին, կրթության թվային վերափոխմանը, կարողունակությունների վրա հիմնված կրթությանը և արհեստական բանականության կիրառման ուղղությամբ իրականացվող նախաձեռնություններին:

Անդրադարձ է եղել նաև դպրոցական ավտոբուսների համակարգի ներդրման ուղղությամբ համագործակցության և փորձի փոխանակման հնարավորություններին՝ հաշվի առնելով այս ոլորտում Արաբական Միացյալ Էմիրությունների հաջողված փորձը և կրթության հասանելիության ապահովման գործում դրա արդյունավետ կիրառումը: Կարևորվել են նաև «Ակադեմիական քաղաք» ծրագրի շրջանակում համագործակցությունն ու փորձի փոխանակումը:

Կողմերը կարևորել են երկու երկրների ոլորտային նախարարությունների միջև համագործակցության մասին փոխըմբռնման հուշագրի ստորագրումը: Այս համատեքստում ընդգծվել են բարձրագույն կրթության, գիտահետազոտական համագործակցության, ուսանողների և դասախոսների փոխանակման, համատեղ վերապատրաստման ծրագրերի, կրթաթոշակների, տեխնիկական և մասնագիտական կրթության, ինչպես նաև որակավորումների փոխճանաչման ուղղություններով համագործակցության զարգացման հնարավորությունները:

Մոհամմադ Ալ Քասիմը հետաքրքրություն է հայտնել Հայաստանի կրթական բարեփոխումների և կրթության թվային վերափոխման ուղղությամբ իրականացվող ծրագրերի նկատմամբ՝ պատրաստակամություն հայտնելով շարունակելու համագործակցությունը փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում:

Այցի շրջանակում ՀՀ ԿԳՄՍ նախարարի գլխավորած պատվիրակությունը մի շարք աշխատանքային հանդիպումներ է ունեցել նաև գործընկեր երկրների պատվիրակությունների ներկայացուցիչների հետ: Մասնավորապես՝ նախարար Ժաննա Անդրեասյանը հանդիպել է Վրաստանի կրթության, գիտության և երիտասարդության նախարար Գիվի Միկենաձեի հետ և Մոնտենեգրոյի կրթության, գիտության և նորարարության նախարար Անջելա Յակշիչ-Ստոյանովիչի հետ: ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը քննարկումներ է ունեցել Ուզբեկստանի նախադպրոցական և դպրոցական կրթության նախարարի առաջին տեղակալ Շերզոդ Կարիմովի, ինչպես նաև Սաուդյան Արաբիայի կրթության նախարարության միջազգային համագործակցության հարցերով նախարարի տեղակալ

Լատիֆա Ալ-Ֆարյանի և Օմանի կրթության նախարարության կրթական աջակցության ծրագրերի գծով փոխնախարար Ինտիսար Աբդուլլահ Սուլեյման Ալ-Ամբուսայիդի հետ:

Հանդիպումների ընթացքում քննարկվել են կրթության ոլորտում երկկողմ համագործակցության զարգացման, փորձի փոխանակման, կրթական բարեփոխումների իրականացման, ինչպես նաև փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ուղղություններով համատեղ ծրագրերի ընդլայնման հնարավորությունները:

ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը Փարիզում մասնակցել է «Վերափոխելով կրթությունը. գագաթնաժողով+4» (Transforming Education Summit +4) բարձր մակարդակի միջոցառմանը, որի առանցքում ճգնաժամային իրավիճակներում կրթության շարունակականության, ինչպես նաև հակամարտություններից, բնական աղետներից, տեղահանությունից և այլ արտակարգ իրավիճակներից տուժած երեխաների համար անվտանգ և որակյալ կրթության հասանելիության հարցերն էին:

Միջոցառման շրջանակում Ժաննա Անդրեասյանը մասնակցել է ««Վերափոխելով կրթությունը» գագաթնաժողովի գլոբալ նախաձեռնությունների ձեռքբերումները և դրանց նշանակությունը 2030 թվականից հետո» խորագրով պանելային քննարկմանը և հանդես եկել ելույթով:

Ներկայացնելով Հայաստանի փորձը՝ նախարարը նշել է, որ հիմնարար ուսումնառությունը, զբաղվածության համար անհրաժեշտ հմտությունների զարգացումն ու հարատև կրթությունը մեկ ամբողջական քաղաքականություն են, որը սկսվում է վաղ մանկությունից և շարունակվում ամբողջ կյանքի ընթացքում: Նա շեշտել է՝ ՀՀ Կառավարությունը կրթությունը հռչակել է «ռազմավարությունների ռազմավարություն», որի առաջնորդող գաղափարն է՝ «Լավ սովորիր, որ լավ ապրես»:

«Կրթությունը պետք է մարդուն պատրաստի ոչ միայն աշխատաշուկա մուտք գործելու, այլև փոփոխություններին հարմարվելու, հասարակական կյանքին իմաստալից մասնակցելու և արժանապատիվ կյանք կառուցելու համար»,- նշել է Ժաննա Անդրեասյանը:

ՀՀ ԿԳՄՍ նախարարը ներկայացրել է մինչև 2030 թվականն իրականացվող կրթական բարեփոխումները՝ առանձնացնելով ներառական և սովորողակենտրոն կրթության զարգացումը, կարողունակությունների վրա հիմնված պետական չափորոշչի ներդրումը, կյանքի հմտությունների և թվային գրագիտության զարգացումը, ինչպես նաև կրթության կառավարման արդյունավետության բարձրացմանն ուղղված նախաձեռնությունները: Նրա խոսքով՝ բարեփոխումների արդյունքներն արդեն արտացոլվում են նաև միջազգային գնահատումների ցուցանիշներում:

Ժաննա Անդրեասյանն առանձնահատուկ անդրադարձել է կրթության թվային վերափոխմանն ու արհեստական բանականության կիրառմանը՝ նշելով, որ Հայաստանը փուլ առ փուլ անցում է կատարում ընդհանուր թվային գրագիտությունից

դեպի դպրոցներում ԱԲ խորացված ուսուցում: Այս համատեքստում նա անդրադարձել է ԱԲ սերունդ, STEP.ai կրթական ծրագրերին, «Արմաթ» ինժեներական լաբորատորիաներին, ԹՈՒՄՈ ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնին՝ ընդգծելով, որ դրանք ձևավորում են տեխնոլոգիական կրթության միասնական էկոհամակարգ:

Նախարարը կարևորել է նաև ՀՀ ԿԳՄՍ նախարարության և OpenAI-ի ընկերության համագործակցությունը, որի արդյունքում 2026-2027 ուսումնական տարվանից Հայաստանի կրթական հաստատություններն ու բուհերը հասանելիություն կունենան ChatGPT Edu հարթակին:

«Կրթական բարեփոխումների հաջողությունը մեծապես կախված է ուսուցչի դերից: Այդ նպատակով ընդլայնվում են ուսուցիչների մասնագիտական զարգացման հնարավորությունները, բարելավվում են աշխատանքի պայմաններն ու վարձատրության համակարգը, ինչպես նաև խթանվում են ժամանակակից մանկավարժական և թվային կարողությունների զարգացումը»,- ընդգծել է Ժաննա Անդրեասյանը:

Անդրադառնալով կրթությունից աշխատաշուկա անցմանը՝ նա ներկայացրել է մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտի բարեփոխումները՝ կարևորելով դուալ կրթության ընդլայնումը, գործատուների ներգրավվածությունը և կրթական ծրագրերի համապատասխանեցումը տնտեսության փոփոխվող պահանջներին: Այդ նպատակով Հայաստանը զարգացնում է մեծահասակների և ոչ ֆորմալ կրթության հնարավորությունները՝ հարատև կրթությունը դարձնելով առավել հասանելի:

Ժաննա Անդրեասյանը շեշտել է, որ կրթության նպատակը չի սահմանափակվում միայն զբաղվածության ապահովմամբ: Նրա խոսքով՝ կրթությունը պետք է նպաստի նաև խաղաղության, ժողովրդավարության, մարդու իրավունքների, բազմազանության նկատմամբ հարգանքի և սոցիալական պատասխանատվության արժեքների ձևավորմանը:

«Հայաստանի նախաձեռնությամբ 2026 թվականի հունիսի 4-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան առանց քվեարկության ընդունել է «Կրթություն հանուն խաղաղության բանաձևը»,- շեշտել է Ժաննա Անդրեասյանը:

Պանելային քննարկման հաջորդ հատվածում նախարարն անդրադարձել է հարատև կրթության ընդլայնման ֆինանսավորման արդյունավետ մոդելներին և հավասար հասանելիության ապահովմանը՝ ընդգծելով, որ կրթության ֆինանսավորումը ոչ թե ծախս է, այլ երկարաժամկետ ներդրում՝ մարդկային կապիտալի, տնտեսական զարգացման, սոցիալական համախմբվածության և երկրի դիմակայունության ամրապնդման ուղղությամբ: Վերջին տարիներին կրթության ոլորտի պետական ֆինանսավորման աճը հնարավորություն է տվել իրականացնել համակարգային բարեփոխումներ, զարգացնել ենթակառուցվածքները և ընդլայնել որակյալ կրթության հասանելիությունը:

Ժաննա Անդրեասյանը ներկայացրել է կրթական միջավայրի արդիականացմանն ուղղված նախաձեռնությունները՝ առանձնացնելով «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագիրը: Նա կարևորել է կրթական համակարգի վերափոխման ավելի լայն տեսլականը՝ նշելով, որ նոր կառուցվող կրթահամալիրները պետք է դառնան ոչ միայն ֆորմալ կրթության, այլև համայնքային զարգացման, մշակութային կյանքի և հարատև կրթության կենտրոններ:

Նախարարը ներկայացրել է նաև «Ակադեմիական քաղաք» ծրագիրը, որը միավորում է բարձրագույն կրթությունը, գիտությունը, նորարարությունն ու տնտեսությունը:

Անդրադառնալով առկա մարտահրավերներին՝ Ժաննա Անդրեասյանը նշել է, որ անհրաժեշտ է շարունակել ներդրումները վաղ ուսումնառության, ներառական կրթության, ուսուցիչների զարգացման, մեծահասակների կրթության և թվային ենթակառուցվածքների ուղղություններով: Կարևոր են նաև հանրային և մասնավոր հատվածների, միջազգային կազմակերպությունների, համայնքների և քաղաքացիական հասարակության միջև գործընկերության ընդլայնումը, ինչպես նաև տվյալահեն քաղաքականությունների իրականացումը, որոնք թույլ կտան գնահատել ոչ միայն ֆինանսավորման ծավալը, այլև դրա ազդեցությունը կրթության հասանելիության, ուսումնառության արդյունքների և զբաղվածության աճի վրա:

«Վերափոխելով կրթությունը. գագաթնաժողով+4»-ը ՅՈՒՆԵՍԿՕ-ի նախաձեռնությամբ անցկացվող բարձր մակարդակի միջազգային հարթակ է, որը միավորում է պետությունների ղեկավարներին, նախարարներին և միջազգային գործընկերներին՝ գնահատելու 2022 թվականի «Վերափոխելով կրթությունը» գագաթնաժողովի արդյունքները և արագացնելու կրթության ոլորտի բարեփոխումները՝ մինչև 2030 թվականը Կայուն զարգացման 4-րդ նպատակի (Որակյալ կրթություն) իրականացման ուղղությամբ:

Գագաթնաժողովի բացմանը ներկա են եղել ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրեն Խալեդ Էլ-Էնանին, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ Ամինա Մոհամեդը և Հարավաֆրիկյան Հանրապետության նախագահ, Կայուն զարգացման 4-րդ նպատակի՝ «Որակյալ կրթություն» ղեկավար կոմիտեի համանախագահ Սիրիլ Ռամաֆոսան:

Այցի շրջանակներում ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը հանդիպում է ունեցել Եգիպտոսի Արաբական Հանրապետության բարձրագույն կրթության և գիտական հետազոտությունների նախարար Աբդել Ազիզ Կոնսովայի հետ:

Հանդիպմանը մասնակցել են ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը և ՅՈՒՆԵՍԿՕ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչ Արամ Հակոբյանը:

Կողմերը քննարկել են Հայաստանի և Եգիպտոսի միջև կրթության, բարձրագույն կրթության և գիտության ոլորտներում համագործակցության զարգացման

հեռանկարները՝ կարևորելով երկու երկրների միջև կրթական կապերի ընդլայնումն ու փորձի փոխանակումը:

ՀՀ ԿԳՄՍ նախարարը ներկայացրել է Հայաստանի բարձրագույն կրթության և գիտության ոլորտի բարեփոխումները, մասնավորապես՝ «Ակադեմիական քաղաք» ծրագիրը՝ նշելով, որ առանձնակի կարևորություն է տրվում միջազգային գործընկերների ընդգրկմանը:

Քննարկվել է մշակման փուլում գտնվող Հայաստան-Եգիպտոս ոլորտային համագործակցության ծրագիրը: Անդրադարձ է կատարվել նաև բարձրագույն կրթության ոլորտում համագործակցության և ավարտական կրթական փաստաթղթերի փոխադարձ ճանաչմանը:

Կողմերը հետաքրքրություն են հայտնել համատեղ գիտահետազոտական ծրագրերի իրականացման, գիտական դրամաշնորհների համաֆինանսավորման, ինչպես նաև երկու երկրների բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտական կազմակերպությունների միջև համագործակցության ընդլայնման հարցերի շուրջ:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը Ֆրանսիայի Հանրապետություն կատարած աշխատանքային այցի շրջանակում հանդիպել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրեն Խալեդ Էլ-Էնանիին:

Հանդիպմանը մասնակցել են նաև ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը և ՅՈՒՆԵՍԿՕ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչ Արամ Հակոբյանը:

Շնորհավորելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրեն Խալեդ Էլ-Էնանիին պաշտոնը ստանձնելու կապակցությամբ՝ Ժաննա Անդրեասյանը հաջողություններ է մաղթել նրան՝ շեշտելով, որ Հայաստանն ակտիվորեն ներգրավված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի աշխատանքային խմբերում և պատրաստ է շարունակաբար նպաստել կազմակերպության առաջնահերթությունների արդյունավետ իրագործմանը:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենը շնորհակալություն է հայտնել Հայաստանին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում վերջերս միաձայն ընդունված «Կրթություն հանուն խաղաղության» (Education for Peace) բանաձևի նախաձեռնման համար՝ ընդգծելով դրա կարևորությունը խաղաղության մշակույթի ամրապնդման և կրթության դերի միջազգային ճանաչման տեսանկյունից: Իր հերթին Ժաննա Անդրեասյանը շեշտել է, որ Հայաստանի համար սկզբունքային նշանակություն ունի միջազգային հարթակներում կրթության դերի կարևորումը՝ որպես խաղաղության, փոխըմբռնման և կայուն զարգացման հաստատման հիմնարար գործոն:

Կողմերն անդրադարձել են նաև այս տարվա աշնանը Երևանում կայանալիք Կենսաբազմազանության կողմերի համաժողովին՝ COP17-ին՝ նշելով, որ այդ շրջանակում նախատեսվում են մի շարք միջոցառումներ՝ այդ թվում ՅՈՒՆԵՍԿՕ-ի ներգրավվածությամբ:

Անդրադառնալով կրթության ոլորտին՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարը ներկայացրել է ՀՀ կրթության զարգացման մինչև 2030 թ. պետական ծրագրի հիմնական ուղղությունները՝ կարևորելով կրթության որակի բարձրացումը, ներառականության ապահովումը, թվային վերափոխումը և կարողահենք կրթության զարգացումը: Նա կարևորել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի փորձագիտական աջակցությունը կրթական քաղաքականությունների մշակման, մասնավորապես՝ մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտի բարեփոխումներում՝ ընդգծելով համատեղ իրականացված ծրագրերի արդյունավետությունը:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի Ասոցացված դպրոցների ցանցի գործունեությանը Հայաստանում, ինչպես նաև մեր պետության մասնակցությանը կազմակերպության առաջիկա կրթական նախաձեռնություններին, այդ թվում՝ 2026 թվականի սեպտեմբերին Փարիզում կայանալիք «Թվային ուսուցման շաբաթ» միջոցառմանը:

Անդրադառնալով մշակույթի ոլորտին՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարը վերահաստատել է Հայաստանի հանձնառությունը ՅՈՒՆԵՍԿՕ-ի մշակութային կոնվենցիաների արդյունավետ իրականացման և համաշխարհային մշակութային ժառանգության պահպանության գործում: Նա տեղեկացրել է, որ ընթացքի մեջ է ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2001 թվականի «Ստորջրյա մշակութային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիայի վավերացման գործընթացը:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրեն Խալեդ Էլ-Էնանին շնորհակալություն է հայտնել հանդիպման համար և բարձր գնահատել Հայաստանի ակտիվ ներգրավվածությունը կազմակերպության ծրագրերին ու նախաձեռնություններին: Նա ընդգծել է, որ Հայաստանը ՅՈՒՆԵՍԿՕ-ի վստահելի գործընկերներից է՝ կարևորելով հատկապես կրթության, մշակույթի և մշակութային ժառանգության պահպանության ոլորտներում իրականացվող համատեղ աշխատանքը:

Հանդիպման ավարտին կողմերը վերահաստատել են համագործակցության հետագա խորացման պատրաստակամությունը:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը հանդիպել է նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի կրթության հարցերով գլխավոր տնօրենի տեղակալ Քուն Չենի հետ:

Հանդիպմանը մասնակցել են ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը և ՅՈՒՆԵՍԿՕ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչ Արամ Հակոբյանը:

Շնորհավորելով Քուն Չենին՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կրթության հարցերով գլխավոր տնօրենի տեղակալի պաշտոնը ստանձնելու կապակցությամբ՝ Ժաննա Անդրեասյանը հաջողություններ է մաղթել նրան պատասխանատու առաքելության իրականացման գործում և շնորհակալություն հայտնել հանդիպման հնարավորության համար: Նա ընդգծել է, որ Հայաստանը բարձր է գնահատում ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ կրթության ոլորտում ձևավորված երկարամյա և արդյունավետ համագործակցությունը՝

վստահություն հայտնելով, որ այն կշարունակի զարգանալ՝ ի նպաստ կրթության որակի, ներառականության և նորարարության:

Ներկայացնելով Հայաստանի կրթական բարեփոխումների ընթացքը՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարն անդրադարձել է հատկապես բարձրագույն կրթության և գիտության ոլորտին՝ նշելով, որ փոփոխությունները միտված են բարձրագույն կրթության և գիտության առավել սերտ ինտեգրմանը, համալսարաններում գիտահետազոտական գործունեության զարգացմանը և ոլորտների միջև կայուն համագործակցության ձևավորմանը: ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենի տեղակալը բարձր է գնահատել Հայաստանում իրականացվող համակարգային բարեփոխումները՝ ընդգծելով դրանց կարևորությունը կրթության և գիտության մրցունակության բարձրացման տեսանկյունից:

Կողմերը քննարկել են նաև ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում վերջերս միաձայն ընդունված «Կրթություն հանուն խաղաղության» (Education for Peace) բանաձևը. Ժաննա Անդրեասյանը նշել է, որ Հայաստանը հավատարիմ է խաղաղության քաղաքականությանը և կարևորում է կրթության դերը այդ համատեքստում:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաև ԲՏՃՄ կրթության զարգացման և այդ ուղղությամբ Հայաստան–ՅՈՒՆԵՍԿՕ համագործակցության ընդլայնման հնարավորությունները: Նախարարը ներկայացրել է Հայաստանի ձեռքբերումները, մասնավորապես՝ ԲՏՃՄ ոլորտներում կանանց մասնակցության բարձր ցուցանիշները՝ ընդգծելով, որ ՀՀ փորձը կարող է հետաքրքիր լինել նաև միջազգային գործընկերների համար:

Ժաննա Անդրեասյանը ներկայացրել է նաև Հայաստանի համագործակցությունը OpenAI ընկերության հետ՝ տեղեկացնելով, որ ՀՀ-ում արդեն գործում են ԱԲ երկու գործարաններ, իսկ երրորդը նախատեսվում է շահագործման հանձնել մինչև տարեվերջ: Նա նաև նշել է, որ Երևանի պետական համալսարանում նախատեսվում է զարգացնել ԱԲ ոլորտի գիտական հետազոտություններ՝ նպաստելով նորարարությունների և բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստմանը:

Կողմերը մտքեր են փոխանակել նաև արհեստական բանականության զարգացմանը զուգահեռ էթիկայի կանոնների կիրառման վերաբերյալ: ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենի տեղակալը բարձր է գնահատել Հայաստանի հետևողական մոտեցումը արհեստական բանականության զարգացման և կիրառման ընթացքում էթիկական սկզբունքների պահպանման հարցում՝ նշելով, որ այդ ուղղությամբ կազմակերպությունը ևս իրականացնում է լայնածավալ հետազոտություններ և ծրագրեր:

Նշվել է, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ի մի շարք նախաձեռնությունների և հետազոտությունների շրջանակում Հայաստանը դիտարկվում է որպես կարևոր գործընկեր:

Հանդիպմանն անդրադարձ է եղել նաև երկկողմ հետաքրքրություն ներկայացնող մի շարք այլ հարցերի:

**7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Տեղի ունեցած տարբեր հանդիպումների ընթացքում կողմերը պայմանավորվածություն են ձեռք բերել շարունակելու համագործակցությունը թանգարանային գործի, մշակութային ժառանգության պահպանության, ժամանակակից արվեստի և մշակութային փոխանակումների ուղղություններով, աճուրդային համակարգի, արվեստի շուկայի կառավարման, մշակութային փոխանակումների, ինչպես նաև մշակութային արժեքների օրինական շրջանառության խթանման և ապօրինի շրջանառության կանխարգելման հետ կապված:

**8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**

Հանդիպումների արդյունքում կողմերը վերահաստատել են իրենց պատրաստակամությունը ընդլայնելու և խորացնելու կրթության, գիտության, մշակույթի ոլորտներում համագործակցությունը:

**9. Ստորագրությունը, ամսաթիվը**

**Պատվիրակության կազմում՝**
**ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և**
**սպորտի նախարարի տեղակալ** **Արթուր Մարտիրոսյան**

7/15/2026

X

ԱՐԹՈՒՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Signed by: MARTIROSYAN ARTUR 4110790255

**Պատվիրակության ղեկավար՝**
**ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և**
**սպորտի նախարար** **Ժաննա Անդրեասյան**

**15.07.2026թ.**